

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունվարի 2019 թվականի N 01-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԱԿ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ
ԴՐՈՒՅՔԱԶՄՓԵՐ Ը ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ Օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետ

<<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ Օրենքի 8-րդ, 10-րդ և 12-րդ հոդվածներ

Սահմանել Ծովակ գյուղական համայնքի 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների

հետևյալ դրույքաչափերը՝

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական

նախագծին համապատասխան

ա/ նոր շենք-շինությունների /բնակելի տուն/ մինչև 300 քմ և 200 քմ ընդհանուր մակերես ունեցող

հասարարական և արտադրական նշանակության օբեկտների համար՝ 10000 դրամ,

բ/ մինչև 20 քմ մակերես ունեցող օբեկտների համար՝ 3000 դրամ,

գ/ 20 քմ և ավելի մակերես ունեցող օբեկտների համար՝ 5000 դրամ

դ/ քանդման և պարսպապատման թույլատվության համար՝ 5000 դրամ

ե/ համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ

և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ 2000 դրամ;

զ/Վճար շինության ավարտական ակտ ձևակերպելու համար՝ 5000/հինգ հազար/ դրամ:

2. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

ա/Մինչև 26 քմ առևտրի տարածքի համար ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար, հիմնական շինությունների ներսում,

յուրաքանչյուր եռամսյակը՝ 6000 դրամ, 26-ից մինչև 50 քմ-ի համար՝ 11000 դրամ, 51-ից 100 քմ-ի համար՝ 15000 դրամ:

բ/ Մինչև 26 քմ առևտրի տարածքի համար ծխախոտի վաճառքի թույլատվության համար, հիմնական շինությունների ներսում, յուրաքանչյուր եռամսյակը՝ 5000 դրամ, 26-ից մինչև 50 քմ-ի համար՝ 11000 դրամ, 51-ից 100 քմ-համար՝ 13000 դրամ:

գ/ գազալցման կայանի գազի վաճառքի, հեղուկ վառելիքի և քսայուղերի մանրածախ առևտրի

թույլատվության համար՝ տարեկան 200000 դրամ, եռամսյակը՝ 50000 դրամ:

դ/Համայնքի տարածքում հանրային սննդի օբյեկտի ժամը 24:00-ից աշխատելու թույլտվության

համար՝ տարեկան 70000 դրամ, եռամսյակը՝ 17500 դրամ:

ե/Տեխնիկական հեղուկների վաճառքի համար՝ տարեկան 40000 դրամ, եռամսյակը՝ 10000 դրամ:

զ/Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար տարեկան 20000 դրամ

3. Համայնքում աղբահանության վճար սահմանել՝

ա/Առևտրի և զվարճանքի օբյեկտների համար. 30դրամ 1 քմ-ի համար,

բ/«Ծովակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, ԱԱՊԿ-ի համար՝ 3 դրամ 1 քմ-

ի համար

զ/ գրասենյակային նշանակության շինությունների համար 5 դրամ 1 քմ-ի համար

դ/բնակիչներից--0—դրամյուրաքանչյուր շնչի համար

3.Սույն որոշումը օրենքի սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության

Արդարադատության Նախարարության պետական իրավական փորձաքննության

անցկացնելու համար:

Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդող տասներորդ օրը:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունվարի 2019 թվականի N 02-Ն

ԾՈՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 18-ի 1-ին մասի 5-րդ կետի «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

ի հոդված 32

ի և համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան

1. Հաստատել 2019թ. համայնքի բյուջեն՝

ա) եկամուտների գծով՝ 71809.2 հազար դրամ

բ) Ծախսերի գծով՝ 71809.2 հազար դրամ

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ հատված 1

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական դասակարգման՝ հատված 2

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ հատված 3

5. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ հատված 4

6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդը) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ հատված 5

7. Սահմանել, որ՝

ա) Ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:

8. Որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունվարի 2019 թվականի N 03-Ն

ԾՈՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019Թ. ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի
Հանրապետության Օրենքի հոդված 18-ի 1-ին մասի 11-րդ կետի դրույթով

1. Ծովակ համայնքի ղեկավարի պաշտոնային
դրույքաչափը սահմանել 330000
(երեք հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

կողմ(6)

դեմ (0)

Ձեռնպահ (0)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունվարի 2019 թվականի N 04-Ն

ԾՈՎԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ <<ԾՈՎԱԿ ԳՅՈՒՂԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ>> ՀՈԱԿ-Ի
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ԵՎ
ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության Օրենքի հոդված 34-ի 3-րդ մասի 2-րդ կետի և հոդված 18-ի 1-ին մասի 28-րդ կետի դրույթով

1. Հաստատել Ծովակ համայնքի ղեկավարի աշխատակազմի, տեխնիկական սպասարկման անձնակազմի, մշակույթի բնագավառի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, դրույքաչափերը և աշխատանքային վարձատրության չափերը համաձայն հավելվածի
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

կողմ (6)

դեմ (0)

Ձեռնպահ (0)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունվարի 2019 թվականի N 05-Ն

ԾՈՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԿԱՐԳԸ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության

Օրենքի հոդված 18-ի 1-ին մասի 7-րդ կետի դրույթով

1. Սահմանել Ծովակ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը 2019 թվականի համար`
- 1) Մոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքների սոցիալական խնդիրների լուծման

նպատակով

ա) մինչև 50000

/հիսուն հազար/ դրամ գումարի տրամադրումը վերապահել համայնքի ղեկավարին

բ) 50000

/հիսուն հազար/ դրամ գումարից ավելի ծախսի դեպքում հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում

- 2) համայնքի տարբեր բնագավառներում սեփական լիազորությունները իրականացնել 2019 թվականի բյուջեով նախատեսված ծախսերի հաշվին`

ա) մինչև 1000000/մեկ միլիոն/ դրամ ծախս պահանջող աշխատանքների կատարումը վերապահել համայնքի ղեկավարին.

բ)

1000000/մեկ միլիոն/ դրամից ավել ծախս պահանջող աշխատանքների դեպքում հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

կողմ(6)

դեմ (0)

Ձեռնպահ (0)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունվարի 2019 թվականի N 06-Ն

ԾՈՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՄՐՑՈՒԹՅՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության Օրենքի հոդված 18-ի 1-ին մասի 21-րդ կետի «Հայաստանի
Հանրապետության Հողային օրենսդրություն» 77-րդ հոդվածի դրույթներով

1. Ստեղծել Ծովակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային
սեփականություն հանդիսացող հողերի տրամադրման մրցութային հանձնաժողով
հետևյալ կազմով՝

- 1) Համայնքի ղեկավար՝ Գ. Հակոբյան
- 2) Մարզպետարանի ներկայացուցիչ՝ Ա. Հարությունյան
- 3) Մարզպետարանի ներկայացուցիչ՝ Ա. Զարոյան
- 4) ՀԾ մասնագետ՝ Ս. Գրիգորյան
- 5) ՀԾ մասնագետ՝ Ա. Մկրտչյան
- 6) Ավագանու անդամ՝ Ս. Ղանդիլյան
- 7) Ավագանու անդամ՝ Գ. Հովհաննիսյան

2. Մրցութային հանձնաժողովից

պահանջել սահմանել մրցութի պայմանները, որտեղ պետք է ներառեն՝

- 1) հողամասին պատկանող զործառնական նշանակությունը.
- 2) հողամասի չափը և վարձակալության (կամ) կառուցապատման ժամկետները.
- 3) հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, վճարի մեկնարկային չափը.
- 4) օգտագործման նպատակը, հաղորդակցուղիների առկայությունը.
- 5) հողամասին կատարման քահանա փակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությ
ունը.

6) գյուղատնտեսական հողատեսքերի դեպքում՝ հողի որակական հատկանիշները, ագրոտե
խնիկական պահանջները.

7) բնապահպանական հողերի պահպանության միջոցառումները:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

կողմ (6)

դեմ (0)

Ձեռնպահ (0)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունվարի 2019 թվականի N 07-Ն

ԾՈՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ
ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ
ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ, ԱՃՈՒՐԴԻ ՔԱՅԼԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով §Տեղական ինքնակառավարման մասին՝ Հայաստանի Հանրապետության Օրենքի հոդված 18-ի 1-ին մասի 21-րդ կետի §Հայաստանի Հանրապետության Հողային օրենսդրի՝ 63-րդ և 77-րդ հոդվածի դրույթներով

1. Մեկ հա վարելահողի վարձակալության համար մեկնարկային գին սահմանել
ա) 2-րդ կարգի անջրտի հողի համար՝ 7500 դրամ
բ) 3-րդ կարգի անջրտի հողի համար՝ 6200 դրամ
գ) 4-րդ կարգի անջրտի հողի համար՝ 4000 դրամ
դ) 5-րդ կարգի անջրտի հողի համար՝ 2000 դրամ
ե) Գյուղ այլ հողերի համար՝ 2000 դրամ
2. Օտարման դեպքում մեկ քառակուսի մետր հողի մեկնարկային գին սահմանել՝
ա) արտադրական նշանակության հողի համար 225 դրամ
բ) հասարակական կառուցապատման հողի համար 250դրամ
գ) բնակավայրի կառուցապատման և այլ հողերի համար 225դրամ
3. Կառուցապատման իրավունքով վարձակալության դեպքում մեկ մետր քառակուսու համար սահմանել վարձավճար 300դրամ
4. Աճուրդի սակարկության մեկ քայլի չափ սահմանել մեկնարկային գնի 5%-ը, աճուրդին մասնակցելու մուտքավճար սահմանել 1000 դրամ, մրցույթի մասնակցության մուտքավճար սահմանել 500դրամ
5. Մրցույթի մեկ քայլի չափ սահմանել 200 դրամ

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

կողմ(6)

դեմ (0)

Ձեռնպահ (0)

Ավագանի՝

- 1) ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
- 2) ԳԱՍՊԱՐՅԱՆ ՆԻԿՈՂՈՍ
- 3) ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿ
- 4) ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
- 5) ՂԱՆԴԻԼՅԱՆ ՍԵՅՐԱՆ
- 6) ՍԱՀԱԿՅԱՆ ՌՈԼԱՆԴ